

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՖԱՐՄԱՆՅԱՆ ՍԻՄՈՆ ՏԻԳՐԱՆԻ

ԳՅՈՒՏԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏ

ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք - քաղաքացիական, առևտրային, միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2013

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАРМАНЯН СИМОН ТИГРАНОВИЧ

ИЗОБРЕТЕНИЕ КАК ОБЪЕКТ ГРАЖДАНСКОГО ПРАВА

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата

юридических наук по специальности

12.00.03 - “Частное право- гражданское, предпринимательское, международное частное, семейное, трудовое право, право социального обеспечения”

Ереван – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի
պետական համալսարանում

Գիտական ղեկավար

իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյան

Պաշտոնական ընդդիմախոսներ

իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ի. Վ. Դոյնիկով
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Ա. Գ. Մեղրյան

Առաջատար կազմակերպություն՝ «Հայաստանում ֆրանսիական
համալսարան» հիմնադրամ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2013թ.-ի հունիսի 28-ին, ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2013թ.-ի մայիսի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ա. Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном
университете

Научный руководитель:

доктор юридических наук,
профессор Т. К. Барсегян

Официальные оппоненты:

доктор юридических наук,
профессор И. В. Дойников
кандидат юридических наук,
доцент С. Г. Мегрян

Ведущая организация: Фонд "Французский университет в Армении"

Защита состоится 28 июня 2013г., в 14⁰⁰ часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 24 мая 2013 г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент

А.Г. Вагаршян

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Գյուտի նկատմամբ իրավունքների պահպանության համար ներկայացվող հայտերի քանակը ցույց է տալիս ամենամյա կայուն աճ (միջինը տարեկան 5 տոկոս՝ սկսած 1995թ.): Սույն փաստը նպաստում է նոր տեսական և օրենսդրական մոտեցումների ստեղծմանը: Այդ մասին է վկայում այս ինստիտուտի վերաբերյալ մի շարք միջազգային և ազգային իրավական ակտերի առկայությունը: Նման պայմաններում զգացվում է այնպիսի տեսական իրավական մտքի կարիք, որը լավագույնս հող կնախապատրաստի վերը նշված իրավական ակտերի կիրառման համար:

Քննարկվող հայտերի ծավալների մեծացմանը զուգընթաց արդիական են դառնում գյուտի իրավական պահպանության արդյունավետ մեխանիզմների ստեղծման խնդիրները: Այսպես, միջազգային մակարդակով գյուտերի իրավական պահպանության կապակցությամբ արդեն իսկ տեսական մտքի մեջ ներդրվել է միջազգային մեկ միասնական արտոնագրի գաղափարը: Այդ ուղղությամբ ստեղծվել են համապատասխան իրավական ակտեր, որոնք կանոնակարգում են միջազգային հայտերի, տարածաշրջանային արտոնագրերի հետ կապված հարաբերությունները: Նշված իրավական ակտերն էլ իրենց հերթին ճանապարհ են հարթում միջազգային արտոնագրի ստեղծման համար:

Թեմայի արդիականությունն ապահովում է նաև գյուտի իրավական պահպանության կապակցությամբ իրավական մտքի աննախադեպ զարգացումը և օրենսդրական ձևակերպումների տարաբնույթ մեկնաբանությունների վտանգը: Այսպես, գյուտի իրավական պահպանության կապակցությամբ օրենսդրության մեջ օգտագործվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ՝ նորույթ, գյուտարարական մակարդակ, արդյունաբերորեն կիրառելիություն, տվյալ բնագավառի մասնագետ և այլն, որոնք մարդկային մտքի անընդհատ զարգացման պայմաններում տարբեր ձևերով են ընկալվում քաղաքացիական շրջանառության մեջ:

Վերը նշված և այլ նախադրյալներով պայմանավորված՝ այսօր Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է գյուտի իրավական պահպանության կապակցությամբ օրենսդրության մշակում՝ հաշվի առնելով եվրոպական երկրների և ամերիկյան առաջադեմ փորձը: Քննարկվող օրենսդրության մոտարկման գործընթացը պահանջում է, որպեսզի առավելագույնս ուսումնասիրվեն Հայաստանի Հանրապետությունում առկա հնարավորություններն ու խնդիրները, որպեսզի ՀՀ օրենսդրությունը, ետ չմնալով միջազգային առաջադեմ փորձից, կարողանա յուրովի՝ սեփական շահերին համապատասխան, ստեղծել իրավական մեխանիզմներ գյուտերի իրավական պահպանության կապակցությամբ:

Հայաստանի Հանրապետության համար քննարկվող խնդրի լուծումը պայ-

մանավորված է նրանով, որ վերջինս, աչքի չընկնելով բնական ռեսուրսների առատությամբ, սեփական տնտեսության զարգացումը ստիպված է ապահովել իր ինտելեկտուալ ներուժով: Իսկ քանի դեռ երկրում չեն ստեղծվել արդյունավետ պայմաններ մտավոր գործունեությամբ զբաղվելու համար, տնտեսության զարգացման ուղղությամբ Հայաստանի որդեգրած քաղաքականությունը կանգնած է վտանգի առաջ:

Այսպիսով, թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ գյուտերի իրավական պահպանության կանոնակարգումներն իրականացնող իրավական ինստիտուտները նոր են՝ գտնվում են զարգացման փուլում, արտոնագրային իրավունքը կանոնակարգող միջազգային իրավական ակտերը և դրանց փոփոխությունները մեծ ծավալ են զբաղեցնում, որի պատճառով ազգային օրենսդրությունները համապատասխանեցնելու կարիք է առաջանում: Վերջապես թեմայի ուսումնասիրության հրատապությունը նաև նրանում է, որ Հայաստանի տնտեսական զարգացման միակ ուղղությունը կարող է հանդիսանալ մտավոր գործունեության ճիշտ օգտագործումը:

Թեմայի գիտական հետազոտման աստիճանը: Գյուտի իրավական պահպանությունը կանոնակարգող արտոնագրային իրավունքը, նորովի կարգավորելով այդ բնագավառի քաղաքացիաիրավական հարաբերությունները, սերտ առնչություններ ունենալով ինչպես վարչական իրավունքի, այնպես էլ միջազգային իրավունքի հետ, գտնվում է իրավական մտքի բուռն քննարկումների կենտրոնում: Նմանատիպ հանգամանքը առաջացնում է իրավական մտքերի բախում, որի արդյունքում էլ թեման ներկայումս զարգացում է ապրում տեսական մակարդակներում:

Խնդիրն այլ է Հայաստանի դեպքում: Հայաստանի Հանրապետությունում այս կապակցությամբ կատարված ուսումնասիրությունները գրեթե բացակայում են: Այդ առումով տեսական միտքը սահմանափակվում է տարիներ շարունակ գոյություն ունեցող կարծրատիպերով: Ինչ վերաբերում է առաջադեմ հասարակության կողմից առաջ քաշված տեսական խնդիրներին, ապա դրանց վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները Հայաստանում բացակայում են: Համապատասխան ուսումնասիրությունները Հայաստանի Հանրապետությունում սահմանափակվում են իրավական ակտերի հիմնավորումների և մտավոր սեփականության վերաբերյալ մի քանի ձեռնարկների շրջանակով այն պարագայում, երբ օտարերկրյա փորձը ցույց է տալիս, որ այս թեման իր լայնաբովանդակ լինելու առումով ենթակա է առանձին ուսումնասիրության:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է բացահայտել գյուտի իրավական պահպանության զարգացման ցանկալի հեռանկարները, տեսական և գործնական մակարդակներում առաջ քաշված հարցադ-

րումների և իրավական վեճերի կապակցությամբ ներկայացնել սեփական տեսակետները՝ ելնելով զարգացող երկրների (այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետության) շահերից: Ատենախոսության համար որպես նշակետ են ընդունվել նաև այն հանգամանքները, որ գյուտերի իրավական պահպանության ժամանակակից օրենսդրական մոտեցումները և իրավակիրառ պրակտիկան լավագույնս կիրառվեն ՀՀ օրենսդրության մեջ, խթան ստեղծվի ազգային արտադրության համար՝ պահպանելով քաղաքացիական շրջանառության սուբյեկտների հավասարությունը:

Ատենախոսության նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

➤ ուսումնասիրել գյուտի էությունն իրավական և ոչ իրավական տեսանկյուններից՝ բացահայտելով գյուտի արտոնագրաունակության պայմանների գործնական և տեսական ընկալումները.

➤ հետազոտել գյուտի իրավական պահպանության էությունը և նշանակությունը պատմական զարգացման փուլերում՝ առանձնացնելով արտոնագրային իրավունքի այն սկզբունքները, որոնք արմատավորվել են պատմական գործընթացների ժամանակ.

➤ բացահայտել գյուտի արտոնագրման առանձնահատկությունները, դրա դրական և բացասական կողմերը՝ ելնելով ինչպես օբյեկտիվ տնտեսական կանոններից, այնպես էլ ազգային շահերից.

➤ հետազոտել գյուտի արտոնագրման գործընթացը ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում, վեր հանել այդ գործընթացների առավելություններն ու թերությունները.

➤ իրականացնել ուսումնասիրություն գյուտի նկատմամբ իրավունքների էությունը բացահայտելու, դրանց իրացման պայմանների առանձնահատկությունները վեր հանելու, իրավունքների իրացման սահմանների և չարաշահումների էությունը ըմբռնելու, ինչպես նաև իրավունքների պաշտպանության և դադարման ուղղություններով:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Հետազոտության օբյեկտն է հանդիսանում արտոնագրային իրավունքը՝ որպես մտավոր սեփականության առանձին ինստիտուտ: Հետազոտման առարկան գյուտն է՝ որպես քաղաքացիական իրավունքի, մտավոր սեփականության և արտոնագրային իրավունքի օբյեկտ: Հետազոտման առարկան ընդգրկում է գյուտի իրավական պահպանությունը՝ նշագծելով այն սահմանը, որից այն կողմ գյուտերը ենթակա չեն իրավական պահպանության:

Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը: Ատենախոսության աղբյուրներից՝ հայրենական և արտասահմանյան, կարելի է առանձնացնել հետևյալ

խմբերը.

- 1) գյուտի իրավական պահպանության դրական և բացասական դրսևորումներին նվիրված աշխատություններ,
- 2) գյուտի իրավական պահպանության էությանը նվիրված աշխատություններ,
- 3) գյուտի իրավական պահպանության գործնական խնդիրների վերաբերյալ աշխատություններ,
- 4) գյուտի նկատմամբ իրավունքների, դրանց իրականացման սահմանների, պաշտպանության և դադարեցման վերաբերյալ աշխատություններ,
- 5) ընդհանուր փիլիսոփայական և իրավափիլիսոփայական գրականություն,
- 6) հետազոտության օբյեկտին և առարկային վերաբերող ներպետական և օտարերկրյա իրավական ակտեր (այդ թվում՝ նաև միջազգային կազմակերպությունների ակտեր):

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Շարադրանքի ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ իրավագիտական ուսումնասիրությունների համար կիրառվող հատուկ մեթոդներ: Ընդհանուր գիտական մեթոդներից օգտագործվել են դիալեկտիկական, տրամաբանական, քննադատական մեթոդները: Իրավագիտական ուսումնասիրությունների համար կիրառվող հատուկ մեթոդներից օգտագործվել են համեմատական իրավագիտության, համեմատական վերլուծության և քանակական վերլուծության մեթոդները՝ վեր հանելով գյուտի իրավական պահպանության այն հիմնարար սկզբունքները, որոնց վրա կառուցվում է արտոնագրային իրավունքը:

Ատենախոսության գիտական նորույթը: Սույն ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ համակարգային կերպով ուսումնասիրվել է գյուտը ՀՀ քաղաքացիական իրավունքի օբյեկտների շրջանակում, վերլուծվել են գյուտի իրավական պահպանության հետ կապված հարաբերություններում առաջացող պրակտիկ և տեսական հիմնախնդիրները, ուսումնասիրվել է մեր երկրում այս հարաբերությունները կանոնակարգող օրենսդրական բազան:

Ինքնուրույն բնույթ են կրում օրենսդրության կատարելագործման վերաբերյալ մեր կողմից ներկայացվող առաջարկները: Առաջին անգամ վեր են հանվել զարգացած երկրների առաջադեմ փորձի և ազգային արտադրողների շահերի հավասարակշռության վրա ստեղծված գյուտերի իրավական պահպանության վերաբերյալ իրավական մեխանիզմներ: Մշակվել են գյուտի իրավական պահպանության կապակցությամբ արտոնագրային քաղաքականության ձևեր Հայաստանի Հանրապետության համար: Մշակվել է գույքային իրավունքների կառա-

վարման մեխանիզմ, որը կարող է դրական ազդեցություն թողնել ոչ միայն իրավունքի, այլև տնտեսության զարգացման վրա:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել ինչպես գյուտի իրավական պահպանության ինստիտուտի դոկտրինալ զարգացման, այնպես էլ գործարար շրջանակներում գյուտի նկատմամբ իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության տեսանկյունից:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. ՀՀ-ում գործող օրենսդրական կարգավորումն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում գյուտի իրավական պահպանությունն ամրագրելիս չի սահմանում գյուտի հասկացությունը, ինչը խնդիր է առաջացնում արտոնագրային իրավունքով պաշտպանվող և չպաշտպանվող գյուտերի տարանջատման ժամանակ: Առաջարկում ենք օրենսդրորեն ամրագրել գյուտի հասկացությունը հետևյալ բովանդակությամբ. *«Գյուտը գործնական գործունեության ցանկացած բնագավառում ծագող խնդրով պայմանավորված, մտավոր գործունեության արդյունքում գտնված հստակ լուծումն է, որը կարող է օբյեկտիվացվել արտադրանքի կամ եղանակի միջոցով և համապատասխանում է օրենքով նախատեսված չափանիշներին»:*

2. Օրենսդիրը գյուտի առարկան նշելիս հստակորեն չի մատնանշում մտավոր սեփականության դուալիզմի՝ գյուտի և դրա առարկայի տարանջատվածության սկզբունքը, ինչի պատճառով պրակտիկայում և հատուկ նորմերի կիրառելիության ժամանակ խնդիրներ են առաջանում: Հետևաբար, առաջարկում ենք գյուտի իրավական պահպանությունը կանոնակարգելիս օրենսդրությունը մշակել՝ ելնելով դուալիզմի սկզբունքից. գյուտի և դրա առարկայի հարաբերակցությունը կանոնակարգելիս շեշտադրումը դնել նրա վրա, որ գյուտն իրագործվում է իր առարկայում կամ, օրինակ՝ գյուտի ապօրինի օգտագործումը սահմանել այն տրամաբանությամբ, որ գյուտի արտոնագրատիրոջը բացառիկ իրավունք է տրվում՝ արտոնագրված օբյեկտն օգտագործելու իր հայեցողությամբ, եթե դա չի խախտում այլ արտոնագրատերերի իրավունքները, ինչպես նաև երրորդ անձանց արգելելու օգտագործել իրեն պատկանող գյուտը:

3. Թեև գյուտի արտոնագրաունակության պայմանների վերաբերյալ օրենսդրական ձևակերպումները համապատասխանում են տնտեսական շրջանառության օբյեկտիվ կանոններին, սակայն գյուտի հատկանիշների բացահայտումը ժամանակի ընթացքում պրակտիկայում ենթարկվում են տարատեսակ մեկնաբանությունների՝ պայմանավորված մարդկային ընկալումների փոփոխություններով: Հետևաբար, ներկա իրավակարգավորումների պայմաններում առաջարկում ենք գյուտի նորույթը բացահայտելիս որպես նշակետ ընդունել՝ հայտարկվող գյուտով ինչպիսի խթան է ստեղծվում տեխնոլոգիական նորարարություններ-

րի համար, և գյուտի հատկանիշները, որոնք ապահովում են խնդրի լուծումը, ինչպիսի առանձնահատկություններ ունեն:

4. Գյուտի իրավական պահպանության վերաբերյալ օրենսդրության մեջ ուղղակիորեն ոչ մի սկզբունք չի սահմանվում, ինչը իրավական նորմերի ճիշտ ընկալման, կիրառման և մեկնաբանման կապակցությամբ խնդիրներ է առաջացնում: Հետևաբար, առաջարկում ենք օրենսդրորեն ամրագրել պատմական փաստերով հիմնավորված հետևյալ սկզբունքները.

ա/ գյուտի իրավական պահպանությունը պետք է ուղղված լինի հեղինակների իրավունքների պաշտպանությանը.

բ/ գյուտի իրավական պահպանությունը պետք է նպաստի գիտության և տեխնիկայի զարգացմանը.

գ/ գյուտի իրավական պահպանությունը պետք է լինի մատչելի և հնարավորինս քիչ ծախսատար.

դ/ գյուտի իրավական պահպանության ժամանակ պետք է պահպանվի հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը:

5. Ներկա իրավակարգավորումների շրջանակներում արտոնագրային հավատարմատարների օգնությամբ իրավունքների պաշտպանությունն անհիմն սահմանափակում է ստացել՝ ի հակադրություն փաստաբանների: Հետևաբար առաջարկում ենք նշված սահմանափակումը հանել, մտավոր սեփականության գործերով արտոնագրային հավատարմատարներին շնորհել բոլոր այն արտոնություններով, որոնք կարող են պատկանել փաստաբաններին:

6. Գյուտի արտոնագրաունակության խնդիրը հանդիսանում է դեռևս ձևավորման փուլում գտնվող ինստիտուտ, որի բացահայտումը չունի համապատասխան հստակ մեխանիզմների ցանկ: Այդ կապակցությամբ առաջարկում ենք սահմանել, որ տեխնիկայի մակարդակի բացահայտումն իրականացվում է լիազոր մարմնի մոտ գտնվող այն նյութերի հիման վրա, որոնք պետական լիազոր մարմնին հայտնի են դարձել իր գործունեության ժամանակ:

7. Նկատի ունենալով ՀՀ-ում արտոնագրային իրավունքի ոլորտում հաջողություններ ապահովելու անհրաժեշտությունը՝ պետք է ուշադրությունն ավելի կենտրոնացնել նոր օրենսդրական գաղափարների ստեղծմանը, քան ազգային օրենսդրության կողմից առկա կարգավորումների կատարյալ նմանակումն է միջազգային չափանիշներին: Ընդ որում, նշված օրենսդրական քաղաքականությունը պետք է բացառապես ուղղված լինի Հայաստանում արդյունաբերության զարգացմանը և ոչ երբեք օտարերկրյա սուբյեկտների իրավունքների անհարկի սահմանափակմանը: Այս կապակցությամբ առաջարկում ենք.

ա/ Հայտի կազմից այնպիսի փաստաթղթերի բացառումը, որոնք հաճախ ձևական բնույթ են կրում, օրինակ՝ ռեֆերատ ներկայացնելու պահանջը դրվում է

միջազգային պայմանագրերում և օտարերկրյա օրենսդրության մեջ, սակայն դա ձևական պահանջ է, քանի որ ռեֆերատում ներկայացվող տվյալները զուգահեռաբար ներկայացվում են նաև հայտի այլ փաստաթղթերում, ուստի որևէ տրամաբանություն չկա հայտատուին ծանրաբեռնել լրացուցիչ պարտավորություններով:

բ/ Լիցենզային պայմանագրերի պարտադիր պետական գրանցման պայմանը հանել, քանի որ որևէ տրամաբանություն չկա նման պարտականության սահմանման համար. այն իրականում լրացուցիչ դժվարություններ է ստեղծում արտոնագրային իրավունքների իրացման համար:

8. Գյուտի նկատմամբ արտոնագրային իրավունքների դադարման կապակցությամբ օրենսդրությամբ ամրագրվում են առանձին նորմեր, որոնք մեծամասամբ չեն բխում ՀՀ Սահմանադրության, ինչպես նաև օբյեկտիվ տնտեսական հարաբերությունների էությունից: Հետևաբար առաջարկում ենք արտոնագրային իրավունքների դադարեցման համար նախատեսել այնպիսի իրավական մեխանիզմներ, որոնք կապահովեն արդարության և արդյունավետության պայմաններում գյուտերի իրավական պահպանության կանոնակարգումը: Մասնավորապես, առաջարկում ենք.

ա/ Արտոնագիրը գործողության մեջ պահելու համար տարեկան պետական տուրքը սահմանված ժամկետներում չվճարելու հիմքով գյուտի նկատմամբ տրամադրված իրավունքների դադարեցման դեպքում հետօգտագործման իրավունք ունեցող անձի համար չսահմանել պարտականություն մտավոր գործունեության արդյունքի օգտագործման ծավալները չընդլայնելու վերաբերյալ:

բ/ Արտոնագիրն անվավեր ճանաչելու գործընթացն իրականացնել ոչ թե դատավարական իրավունքով նախատեսված ընդհանուր նորմերի, այլ մտավոր սեփականության գործերով առկա հատուկ դատավարական նորմերի միջոցով.

գ/ Գյուտի նկատմամբ իրավունքները դադարեցնել ոչ թե առաջին հարկադրական լիցենզիան տրամադրելուց հետո՝ երկու տարվա ընթացքում գյուտը իրավատիրոջ կողմից բավարար չափով չօգտագործելու, այլ հարկադրական լիցենզիաների տրամադրման հիմքերը պահպանվելու դեպքում:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել «քաղաքացիական իրավունք», «գործարարական իրավունք», «մտավոր սեփականություն», «արդյունաբերական սեփականություն», «արտոնագրային իրավունք» դասընթացներում, ինչպես նաև այն բոլոր դասընթացներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է գյուտի իրավական պահպանության հետ: Կատարված ուսումնասիրությունները կարող են օգտակար լինել դատական պրակտիկայում և գործնական գործունեության ցանկացած բնագավառում, երբ խոսքը վերաբերում է գյու-

տերի իրավական պահպանությամբ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են գիտական հոդվածներում և միջազգային գիտաժողովներում ներկայացված զեկույցներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված 10 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ատենախոսության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթները:

Առաջին գլխում` «Գյուտի էությունը» վերտառությամբ, փորձ է արված բացահայտելու գյուտի համընդհանուր և իրավական հասկացությունները, օբյեկտիվ իրականության մեջ գյուտարարական մտքի օբյեկտիվացման ձևերը, գյուտի արտոնագրաունակության պայմանները և դրա իրավական պահպանության էությունն ու նշանակությունը:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում` «Գյուտի հասկացությունը», բացահայտվում է գյուտի` որպես համընդհանուր ըմբռնման և իրավաբանական ըմբռնման արդյունքների էությունը: Առաջին դեպքում հեղինակի կողմից հիմնավորվում է, որ գյուտը որպես համընդհանուր ըմբռնման արդյունք գործնական գործունեության ցանկացած բնագավառում ծագող խնդրով պայմանավորված, մտավոր գործունեության արդյունքում գտնված հստակ լուծումն է:

Գյուտի` որպես իրավաբանական ըմբռնման արդյունքի բացահայտման ժամանակ հեղինակի կողմից հիմնավորվում է, որ այն հանդիսանում է համընդհանուր ըմբռնման արդյունքի մաս: Գյուտի իրավաբանական ըմբռնման շրջանակներում առաջ է քաշվում այն հասկացությունը, որ մայրցամաքային իրավական համակարգի երկրներում գյուտ է համարվում միայն որոշակի սոցիալ-տնտեսական չափանիշներին բավարարող մտավոր գործունեության արդյունքը` տեխնիկական լուծումը, որը բավարարում է արտոնագրաունակության պայմաններին և օրենքով սահմանված կարգով անցել է համապատասխան որակավորում:

Կատարված ուսումնասիրության արդյունքում եզրահանգում է կատարվում, որ արտոնագրային իրավունքով պաշտպանվող և չպաշտպանվող գյուտերի

տարանջատումը հստակ չի տրվում օրենսդրությամբ, քանի որ որևէ իրավական ակտում ամբողջականորեն միասնության մեջ չի բացահայտվում գյուտի հասկացությունը: Ելնելով օրենսդրության հստակեցման պահանջներից՝ առաջարկվում է «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը լրացնել գյուտի հասկացությամբ հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքի իմաստով գյուտը գործնական գործունեության ցանկացած բնագավառում ծագող խնդրով պայմանավորված, մտավոր գործունեության արդյունքում գտնված հստակ լուծումն է, որը կարող է օբյեկտիվացվել արտադրանքի կամ եղանակի միջոցով և համապատասխանում է օրենքով նախատեսված չափանիշներին»:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Գյուտի առարկան», բացահայտվում են գյուտարարական մտքի օբյեկտիվացման ձևերը (արտադրանք, եղանակ, օգտագործում), դրանց դերն ու նշանակությունը հանրային և մասնավոր շահերի տեսանկյունից, ոչ արտոնագրաունակ գյուտերի էությունը:

Գյուտի առարկաներից արտադրանքի կապակցությամբ հետևություն է արվում, որ այն միջազգային պայմանագրերի լույսի ներքո պետք է մեկնաբանվի ամենալայն իմաստով՝ տեխնոլոգիայի ցանկացած բնագավառի շրջանակներում՝ չսահմանափակվելով միայն «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքում կամ դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերում բերված արտադրանքի տեսակներով:

Գյուտի առարկաներից եղանակը «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքում և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերում բացահայտվում է ոչ թե օրինակների, այլ հասկացության միջոցով: Եղանակ ասելով «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքը հասկանում է նյութական միջոցներով նյութական օբյեկտի նկատմամբ գործողությունների իրականացման գործընթացը: Եղանակ է համարվում գործընթացը, որոշակի շարժումը կամ շարժումների խումբը:

Առաջ է քաշվում այն դրույթը, որ գյուտի «օգտագործում» առարկայի սահմանումը կրում է տեսական և ոչ պրակտիկ բնույթ: Անհասկանալի է՝ ինչպես պետք է գյուտը օբյեկտիվացվի օգտագործման ընթացքում:

Ոչ արտոնագրաունակ գյուտերը բացահայտելիս առաջ է քաշվում այն խնդիրը, որ արդյունաբերական կամ առևտրային նպատակներով մարդու էմբրիոնների օգտագործման մասով կատարված գյուտն ունի առանձնահատկություններ: Եթե մնացած բացառությունների դեպքում խնդիրը հստակ է ոչ արտոնագրաունակ գյուտերի մասով, ապա այստեղ դրվում է պայման, եթե մարդու էմբրիոնների օգտագործումը չունի արդյունաբերական կամ առևտրային նպա-

տակ, ապա այն թույլատրելի է: Առաջարկվում է հետևել եվրոպական փորձին՝ արտոնագրաունակ համարել նաև այն դեպքերը, երբ վերը նշված օգտագործումն ուղղված է մարդու էմբրիոնների ակնհայտ թերությունների բարելավմանը: Հակառակ պարագայում այս մասով գյուտերի արտոնագրումը խնդիրներ կունենա արդյունաբերորեն կիրառելիության տեսանկյունից:

Քննարկվող պարագրաֆում կատարված ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվում է «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը շարադրել այն բովանդակությամբ, որ գյուտը ոչ թե վերաբերի այլ իրագործվի առարկայում, քննարկվող հոդվածում բացառել գյուտի «օգտագործում» առարկան: Ինչ վերաբերում է իրավական պահպանությունից կատարված բացառություններին, ապա առաջարկվում է մարդու էմբրիոնների օգտագործումը թույլատրելի համարել նաև այն դեպքերում, երբ այն ուղղված է դրանց ակնհայտ թերությունների բարելավմանը:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Գյուտի արտոնագրաունակության պայմանները», բացահայտվում են նորույթ, գյուտարարական մակարդակ և արդյունաբերորեն կիրառելի հասկացությունները:

Նորույթի բացահայտման համար հեղինակի կողմից առաջ են քաշվում հետևյալ հարցադրումները՝ ա/ ո՞րն է տեխնիկայի մակարդակը, բ/ ո՞րոնք են պահպանության ենթակա գյուտի բնորոշող գծերը, գ/ ինչպիսի՞ արդյունք է տվել առաջնության թվականի դրությամբ պահպանության ենթակա գյուտը բնորոշող գծերի համեմատությունը այլ գյուտերը բնորոշող գծերի հետ:

Արդյունքում հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ գյուտի հատկանիշներից նորույթը օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող, նորանոր տեխնոլոգիական բացահայտումներ կատարելուն խթանող երևույթ է: Գյուտի նորույթը բացահայտելիս նշակետ պետք է ընդունվեն, թե հայտարկվող գյուտով ինչպիսի խթան է ստեղծվում տեխնոլոգիական նորարարությունների համար, և քննարկվող մտավոր գործունեության հատկանիշները, որոնք ապահովում են խնդրի լուծումը, ինչպիսի առանձնահատկություններ ունեն:

Հայտարկվող գյուտի գյուտարարական մակարդակը բացահայտելու համար՝ հեղինակն անհրաժեշտ է համարում բացահայտել հետևյալ հարցադրումները.

ա/ գյուտի ո՞ր հատկանիշն է դրսևորում դրա գյուտարարական մակարդակը.

բ/ մինչև տվյալ գյուտի առաջնության թվականը տեխնիկայի տվյալ բնագավառի մասնագետի մասնագիտական (ոչ երևակայական) տեսանկյունից ինչպիսի՞ն է եղել տեխնիկայի մակարդակը հայտարկվող գյուտի կապակցությամբ. գ/

ինչպիսի՞ տարբերություններ են առկա հայտարկվող գյուտի և հայտնաբերված տեխնիկական լուծումների միջև:

դ/ հայտնաբերված տարբերություններին հասնելն արդյո՞ք ակնհայտ է եղել տվյալ բնագավառի մասնագետի համար:

Որևէ իրավական ակտով չի սահմանվում, թե արդյունաբերորեն կիրառելիությունը որ պահի համար պետք է բացահայտվի: Ըստ հեղինակի՝ սա կարելի է ոչ թե օրենսդրի բացթողումը համարել, այլ ընդհակառակը՝ նպատակաուղղված անորոշության սահմանում: Ի տարբերություն գյուտի նորույթին և գյուտարարական մակարդակին, որոնք կարող են և պետք է սահմանվեն որոշակի ժամանակահատվածի համար, գյուտի արդյունաբերորեն կիրառելիությունը հնարավոր է, որ առկա լինի միայն հետագայում: Եթե նորույթի և գյուտարարական մակարդակի անմիջական առկայությունը անհրաժեշտ է, գյուտի արդյունաբերորեն կիրառելիությունը հնարավոր է՝ ծագի հետագայում, ինչը տրամաբանական և ուղիղ համեմատական է գյուտի նորույթի ու գյուտարարական մակարդակի հետ:

Առաջին գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Գյուտի իրավական պահպանության էությունը», բացահայտվում են գյուտի իրավական պահպանության իրականացման ձևերը և դրանց հիմքում ընկած սկզբունքները:

Քննարկվող պարագրաֆում գյուտի իրավական պահպանության կապակցությամբ առաջ են քաշվում հետևյալ սկզբունքները

ա/ Գյուտի իրավական պահպանությունը պետք է ուղղված լինի հեղինակների իրավունքների պաշտպանությանը.

բ/ Գյուտի իրավական պահպանությունը պետք է ուղղված լինի գիտության և տեխնիկայի զարգացմանը.

գ/ Գյուտի իրավական պահպանությունը պետք է լինի մատչելի և հնարավորինս քիչ ծախսատար.

դ/ Գյուտի իրավական պահպանության ժամանակ պետք է պահպանվի հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը:

Երկրորդ գլխում՝ «Գյուտի արտոնագրումը», բացահայտվում են գյուտի նկատմամբ իրավունքների ձևակերպման էությունը, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում գյուտի արտոնագրման առանձնահատկությունները:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Գյուտի արտոնագրման ընդհանուր բնութագիրը», բացահայտվում են գյուտի իրավական պահպանության իրականացման ձևերը և դրանց հիմքում ընկած սկզբունքները: Բացահայտվում են գյուտի իրավական պահպանության կապակցությամբ օգտագործվող հայտատու, հայտ, համապատասխան իրավասու մարմին եզրույթները:

Նշվում է, որ գյուտի արտոնագրումը գյուտերի պետականորեն ճանաչման գործընթաց է: Ի տարբերություն մտավոր գործունեության այն արդյունքների, որոնք իրավական պահպանություն են ստանում ստեղծման փաստի ուժով, այս դեպքում իրավական պահպանություն են ստանում հիմնականում արդյունավետությամբ օժտված մտավոր գործունեության արդյունքները: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ գյուտի արտոնագրումը կապված է որոշակի ծախսերի հետ (տուրքեր, թարգմանչական ծախսեր և այլն): Այդ ծախսերն էլ ապահովում են, որպեսզի արտոնագրվեն իրենցից ինչ-որ արժեք ներկայացնող, արդյունավետությամբ օժտված տեխնիկական լուծումները:

Քննարկվող պարագրաֆում գյուտի արտոնագրումը ներկայացվում է իբրև գործընթաց, որն ավարտվում է արտոնագրի տրամադրմամբ: Իսկ արտոնագրի կապակցությամբ նշվում է, որ այն օրենքով սահմանված կարգով պետության կամ միջազգային կազմակերպության անունից տրվող պաշտոնական փաստաթուղթ՝ պահպանագիր է, որը տրվում է նոր, որևէ մեկին նախկինում չպատկանող տեխնիկական լուծումների համար, և որի արդյունքում պետության կողմից ճանաչվում են տեխնիկական լուծման նկատմամբ անձանց բացառիկ իրավունքները:

Կատարված ուսումնասիրության արդյունքում հեղինակը եզրահանգում է, որ գյուտի արտոնագրումն այնպիսի գործողությունների համալիր է, որի հիմնական նպատակը գյուտի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրականացումն է այնպես, որպեսզի առավելագույնս խթանվի գիտության և տեխնիկայի զարգացումը՝ պահպանության ենթարկելով առավելապես արդյունավետությամբ օժտված գյուտերին:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Գյուտի արտոնագրումն ազգային ընթացակարգով», բացահայտվում են գյուտի հայտի ներկայացման, գրանցման, փորձաքննության, արտոնագրի տրամադրման, մինչև արտոնագրի գործունեության իններորդ տարվա ավարտը գյուտի արտոնագրաունակության պայմանների (էության) վերաբերյալ գրավոր ապացույցի ներկայացման փուլերը, որոնք անհրաժեշտ են գյուտն արտոնագրելիս:

Հայտի ներկայացման էությունը ներկայացնելիս առաջարկվում է արտոնագրային հավատարմատարներին մտավոր սեփականության գործերով ընձեռել այն նույն լիազորություններով, ինչպիսիք նախատեսված են փաստաբանների համար:

Հայտի փորձաքննության էությունը բացահայտելիս առաջ է քաշվում հարցադրումը, թե ինչ է հասկացվում լիազոր մարմնի մոտ գտնվող նյութերի հիման վրա տեխնիկայի մակարդակը որոշել ասելով: Այս հարցադրումը կարելի է հասկանալ տարբեր տեսանկյուններից: Առաջին՝ լիազոր մարմնի մոտ գտնվող տեղե-

կություն կարելի է համարել ինչպես լիազոր մարմնին հայտնի, այնպես էլ լիազոր մարմնին անհայտ, սակայն հայտնի լինելու ենթակա ցանկացած տեղեկությունը. այստեղ խոսքը գնում է հանրամատչելի տեղեկատվության մասին:

Երկրորդ տեսանկյուն՝ լիազոր մարմնի մոտ գտնվող տեղեկություն կարող է լինել ցանկացած տեղեկատվություն, որը հայտնի է դարձել գործակալությանն իր գործունեության ընթացքում: Ամենանեղ ընկալման արդյունքում նշված հարցադրումը կարելի է հասկանալ միայն հայտի մեջ առկա տեղեկատվությունը: Այս մասով նշվում է՝ օրենքը հստակեցման կարիք ունի, թե որ մակարդակով պետք է հասկացվի գործակալության մոտ գտնվող տեղեկատվությունը: Ավելին, պետք է նշվի, որ այդպիսին է համարվում գործակալությանն իր գործունեության ժամանակ օրինական ճանապարհով հայտնի դարձած ցանկացած հավաստի տեղեկություն, այդ թվում՝ նաև նախկինում ներկայացված հայտերի մեջ առկա տեղեկատվությունը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Գյուտի արտոնագրումը միջազգային և տարածաշրջանային մակարդակներում», բացահայտվում են գյուտի արտոնագրման առանձնահատկությունները «Արտոնագրային համագործակցության մասին» 1970 թ. հունիսի 19-ի Վաշինգտոնի պայմանագրի (այսուհետ՝ նաև PCT) և 1994 թ. սեպտեմբերի 9-ի Մոսկվայի «Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի» շրջանակներում:

PCT շրջանակներում գյուտի արտոնագրման կապակցությամբ հեղինակի կողմից առանձնացվում է երկու մակարդակ՝

- Ա) Միջազգային մակարդակ,*
- Բ) Ազգային մակարդակ:*

Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի շրջանակներում գյուտի արտոնագրումը ներկայացնելիս հեղինակը կանգ է առնում նրա վրա, որ եվրասիական արտոնագիրը միասնական արտոնագիր է Եվրասիական կոնվենցիայի անդամ երկրների համար, ինչը մի քայլ առաջ է PCT-ից:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում հեղինակը եզրահանգում է, որ գյուտի արտոնագրումը գործընթաց է, որը փաստացի իրականացնում են ինչպես պետական մարմինները, այնպես էլ միջազգային կառույցները: Սակայն երկու դեպքում էլ համարվում է, որ գյուտի արտոնագրումն իրականացվում է ի վերջո պետական՝ վարչական մարմնի կողմից. հետևաբար գյուտի միջազգային, տարածաշրջանային և ազգային մակարդակներում արտոնագրումը պետք է իրականացվի համընդհանուր ճանաչում ստացած միասնական սկզբունքներից ելնելով: Ասվածը չի նշանակում, որ ազգային օրենսդրությունը պետք է միայն համապատասխանեցնել միջազգային պայմանագրերին: Ավելին՝ ազգային օրենսդրության մեջ ցանկացած նորամուծություն ողջունելի է գոնե այն

հիմնավորմամբ, որ միջազգային իրավական ակտերի հետագա զարգացումն ապահովվում է ներպետական օրենսդրությունների լավագույն փորձը կիրառելու միջոցով: Իսկ Հայաստանի Հանրապետությունը, արտոնագրային իրավունքի ոլորտում հանդիսանալով քիչ զարգացած պետություն, կարող է իրեն թույլ տալ հավակնոտ և դեռևս պրակտիկայում կիրառում չստացած մեթոդների կիրառումը:

Երրորդ գլխում՝ «Գյուտի նկատմամբ իրավունքները», բացահայտվում են գյուտի նկատմամբ անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները, գույքային իրավունքների իրացման ձևերը և սահմանները, ինչպես նաև դրանց պաշտպանությունն ու իրավունքների դադարման էությունը:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Գյուտի նկատմամբ անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները», առաջարկվում է գույքային իրավունքների մասով դուալիզմի սկզբունքը պահելու համար՝ միայն սահմանել, որ իրավատերը բացառիկ իրավունք ունի օգտագործելու և արգելելու երրորդ անձանց օգտագործել իրեն պատկանող գյուտը:

Այսպես, «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, կրկնելով TRIPS համաձայնագրի 28-րդ հոդվածը, սահմանում է, որ գյուտի արտոնագրատիրոջը բացառիկ իրավունք է տրվում երրորդ անձանց արգելելու՝

1) եթե արտոնագրի առարկան արտադրանք է՝ առանց իր թույլտվության պատրաստել, օգտագործել, շուկա մտցնել, առաջարկել վաճառքի, վաճառել կամ ներմուծել կամ նշված գործողություններից մեկի նպատակով ձեռք բերել (տիրապետել) այդ արտադրանքը.

2) եթե արտոնագրի առարկան եղանակ է՝ առանց իր թույլտվության օգտագործել այդ եղանակը կամ առաջարկել այդպիսի օգտագործում, երբ երրորդ անձը գիտի թույլտվության անհրաժեշտության մասին կամ դրա հանգամանքներն ակնհայտ են, ինչպես նաև շուկա մտցնել, առաջարկել վաճառքի կամ վաճառել այդ եղանակով անմիջականորեն ստացված արտադրանքը, օգտագործել, ներմուծել կամ նշված գործողություններից մեկի նպատակով ձեռք բերել (տիրապետել) այդ արտադրանքը:

Ինչպես TRIPS համաձայնագիրը, այնպես էլ «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքը գյուտի նկատմամբ բացառիկ իրավունքները սահմանելիս չեն կատարել տարանջատում, որ իրավատիրոջը պատկանում է միայն արտադրանքի կամ եղանակի մեջ դրված տեխնիկական լուծումը, իսկ երրորդ անձինք պարտավոր են չարտադրել կամ չտարածել արտադրանք, որն իր մեջ պարունակում է ուրիշին պատկանող գյուտը:

Այս պարագրաֆում հիմնավորվում է նաև, որ մինչև հայտի հրապարակման թվականը գյուտի նախնական պահպանությունը պետք է բացառվի, որպեսզի պրակտիկայում չառաջանան գյուտերի օգտագործման կապակցությամբ արհեստական խոչընդոտներ:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում` «Գյուտի նկատմամբ իրավունքների իրականացումը և դրանց սահմանները», իրավունքների իրականացումը բացահայտվում է արտոնագրային իրավունքների օգտագործման թույլտվության, ինչպես նաև փոխանցելու միջոցով, իսկ իրավունքների իրացման սահմանները քննարկելիս հիմք է ընդունվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված քաղաքացիական իրավունքների իրականացման սահմանները նախատեսող և դրանց հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող այլ իրավանորմեր:

Արտոնագրային իրավունքների օգտագործման թույլտվությանն անդրադառնալիս նշվում է, որ լիցենզային պայմանագրերի պետական գրանցման պահանջը բովանդակային առումով լրացուցիչ վարչարարությունից այլ ֆունկցիա չի կատարում: Այսինքն` լիցենզային պայմանագրերի պետական գրանցման պահանջը չի համապատասխանում գործարարության խթանման քաղաքականությանը:

Գյուտի նկատմամբ իրավունքների իրականացման սահմանները քննարկելիս նշվում են հարկադրական լիցենզիաների առանձնահատկությունները:

Այսպես, «Գյուտերի օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածը սահմանում է. «Ցանկացած անձ կամ Հայաստանի Հանրապետությունը, առանց արտոնագրատիրոջ (իրավատիրոջ) համաձայնության, դատարանի որոշմամբ կարող է օգտագործել պահպանվող գյուտը, ... եթե`

1) դա պահանջում է հասարակության շահերը, մասնավորապես` ազգային անվտանգության, սննդի, առողջապահության կամ կենսական նշանակություն ունեցող այլ բնագավառները.

2) արտոնագրատերը կամ լիցենզառուն արտոնագրային իրավունքներն օգտագործում է անբարեխիղճ, մասնավորապես, երբ օգտագործման ձևերը հակասում են ընդունված կանոններին` սահմանափակելով մրցակցությունը.

3) գյուտը, ... հայտը ներկայացնելու թվականից` 4 տարվա կամ արտոնագիր (վկայագիր) տալու օրվանից հետո` 3 տարվա ընթացքում (ընդ որում, պետք է կիրառվի ավելի ուշ լրացող ժամկետը), չի օգտագործվել կամ օգտագործվել է անբավարար»:

Վերը նշվածի կապակցությամբ հայտնվում է, որ նախ անհիմն է, որ «ցանկացած անձ» եզրույթի շրջանակներում չի դիտարկվել նաև Հայաստանի Հան-

րապետությունը, երբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի երկրորդ բաժնի տրամաբանությունից հետևում է որ «ցանկացած անձ» եզրույթի ներքո հանդես են գալիս քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտները:

Հաջորդ խնդիրը հարկադրական լիցենզիաների հետ հետևյալն է: «Գյուտերի օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի երրորդ մասից բխում է, որ հարկադրական լիցենզիաները տրամադրվում են դիմումի հիման վրա, այլ ոչ թե հայցի: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա: Իսկ միայն դիմումի հիման վրա հարկադրական լիցենզիաների վերաբերյալ գործեր քննելը¹ ոչնչով արդարացված չէ: Անհնար է պատկերացնել իրավիճակ, երբ առկա չէ քաղաքացիաիրավական վեճ հարկադրական լիցենզիայի տրամադրման կապակցությամբ:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Գյուտի նկատմամբ իրավունքների պաշտպանությունը և դրանց դադարեցումը», բացահայտվում են արտոնագրային իրավունքների պաշտպանության եղանակները և դրանց դադարեցման հետ կապված գործնական խնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

Գյուտի նկատմամբ տրամադրված իրավունքները դադարեցվում են, եթե՝

1) *իրավատերը դրանցից հրաժարվելու մասին դիմում է ներկայացրել պետական լիազոր մարմին: ...*

2) *արտոնագիրը գործողության մեջ պահելու համար տարեկան պետական տուրքը սահմանված ժամկետներում չի վճարվել:*

3) *անվավեր է ճանաչվել արտոնագիրը:*

4) *այն իրավատիրոջ կողմից բավարար չափով չի օգտագործվել առաջին հարկադրական լիցենզիան տրամադրելուց հետո՝ երկու տարվա ընթացքում:*

5) *լրացել է այն ժամկետը, որի համար տրամադրվել են իրավունքները:*

Առաջին դեպքում քննարկվում է, թե արդյոք իրավունքից հրաժարվելու դեպքում հրաժարումից հետո ընկած ժամանակահատվածի համար վճարված պետական տուրքը պետք է վերադարձվի:

Այս կապակցությամբ առաջարկում է քննարկվող իրավանորմը լրացնել այն բովանդակությամբ, որ հրաժարումից հետո այդ ժամանակահատվածի համար վճարված պետական տուրքը վերադարձվում է իրավատիրոջը:

Արտոնագիրը գործողության մեջ պահելու համար տարեկան պետական տուրքը սահմանված ժամկետներում չվճարելու հիմքով գյուտի նկատմամբ

¹ Այս դեպքում գործերն ըստ էության պետք է քննարկվեն իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերի վարույթի շրջանակներում:

տրամադրված իրավունքների դադարեցման առանձնահատկություններից նշվում է հետևյալը:

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածը սահմանում է ցանկացած անձ, որը գյուտի իրավական պահպանության դադարեցման թվականից մինչև պետական լիազոր մարմնի պաշտոնական տեղեկագրում արտոնագրի գործողության վերականգնման մասին տեղեկությունների հրապարակման թվականը բարեխղճորեն սկսել է օրենքի համաձայն պահպանվող գյուտի օգտագործումը կամ կատարել է օգտագործման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ, պահպանում է դրա հետագա անհատույց օգտագործման իրավունքը՝ առանց այդպիսի օգտագործման ծավալի ընդլայնման (հետօգտագործման իրավունք):

Ըստ հեղինակի՝ հետօգտագործման իրավունքը անհարկի սահմանափակում է ստացել: Այսպես, անձը, ով տնտեսական գործունեություն է սկսել ծավալել մտավոր գործունեության արդյունքի օգտագործմամբ այն նկատառումից ելնելով, որ հետագայում ևս հավասար պայմաններ կունենա շուկայում, ստիպված է լինում կրել իրավատիրոջ ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում առաջացած բացասական հետևանքները:

Արտոնագիրն անվավեր ճանաչելու կապակցությամբ նշվում է, որ գյուտի նկատմամբ իրավունքների դադարեցումը ճիշտ կլինի սկսել պետական գրանցամատյանում գրառումը վերացնելուց, ոչ թե արտոնագիրն անվավեր ճանաչելուց:

Ներկայիս կարգավորման պայմաններում արտոնագրի անվավեր ճանաչումը լուրջ խնդիրներ կարող է ունենալ նաև հայց ներկայացնելու ժամկետների մասով: Այսպես, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածը սահմանում է, որ վիճարկման հայցերի դեպքում հայցը դատարան կարող է ներկայացվել վարչական ակտն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, իսկ «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 43¹-րդ հոդվածի համաձայն՝ արտոնագիրը կարող է անվավեր ճանաչվել իր գործողության ժամկետի ողջ ընթացքում:

Այս կապակցությամբ առաջարկվում է ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածում բացառություն նախատեսել մտավոր սեփականության գործերի համար այնպես, ինչպես դա արված է, օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում սնանկության վարույթը կարգավորող օրենքների մասով:

Գյուտի նկատմամբ տրամադրված իրավունքները դադարեցվում է նաև, երբ այն իրավատիրոջ կողմից բավարար չափով չի օգտագործվել առաջին հարկադրական լիցենզիան տրամադրելուց հետո՝ երկու տարվա ընթացքում:

Ըստ հեղինակի՝ քննարկվող նորմով ոչ թե պետք է սահմանվեր, որ ոչ բավարար չափով օգտագործումն է իրավունքի դադարման հիմք, այլ հարակադրական լիցենզիայի տրամադրման հիմքերի պահպանումը երկու տարվա ընթացքում հիմք է իրավունքի դադարման համար:

Եզրահանգումներում ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքներն ու հեղինակի եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրության կատարելագործման առնչությամբ ներկայացված առաջարկությունները, որոնք ամփոփ հանգում են հետևյալին.

1. Արտոնագրային իրավունքով պահպանվող գյուտերի և մյուս գյուտերի միջև տարանջատումը հստակեցնելու նպատակից ելնելով՝ օրենսդրորեն պետք է ամրագրել գյուտի հասկացությունը, որպեսզի հասկանալի լինի՝ գյուտերի հանդիմանուր զանգվածից որ մասն է ենթակա իրավական պահպանության:

2. Մտավոր սեփականության դուալիզմի սկզբունքից ելնելով՝ «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը պետք է շարադրել այն բովանդակությամբ, որ

*ա/ գյուտը ոչ թե վերաբերի այլ իրագործվի առարկայում,
բ/ բացառվի գյուտի «օգտագործում» առարկան,*

3. Ոլորտը կանոնակարգող իրավական նորմերի բացահայտումը հեշտացնելու նպատակից ելնելով՝ անհրաժեշտ է օրնեսդրությանն մեջ ներմուծել պատմականորեն հիմնավորված արտոնագրային իրավունքի մի շարք սկզբունքներ:

4. Արդյունավետ դատական պաշտպանությունն ապահովելու համար՝ մտավոր սեփականության գործերով դատական և միջդատական գործընթացներում արտոնագրային հավատարմատարներին պետք է ընձեռել այն նույն իրավասություններով, ինչով որ օժտված են փաստաբանները:

5. Ելնելով ազգային անվտանգության շահերից՝ արտոնագրային իրավունքում գյուտի իրավական պահպանությունը գաղտնի գյուտերի մասով պետք է բացառել:

6. Մտավոր սեփականության դուալիզմի սկզբունքի կիրառումն ապահովելու համար՝ «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասը պետք է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «*Գյուտի կամ օգտակար մոդելի արտոնագրով արտոնագրատիրոջը բացառիկ իրավունք է տրվում արտոնագրված օբյեկտն օգտագործելու իր հայեցողությամբ, եթե դա չի խախտում այլ արտոնագրատերերի իրավունքները, ինչպես նաև երրորդ անձանց արգելելու օգտագործել իրեն պատկանող գյուտը կամ օգտակար մոդելը*»:

7. Մտավոր սեփականության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ ՀՀ քաղաքացիական 1237-րդ հոդվածը պետք է շարադրել հետևյալ խմբագրությամբ:

յամբ. «ժառանգությունը բաժանելու՝ ներառյալ ժառանգներից մեկի բաժինը դրանից առանձնացնելու վերաբերյալ ժառանգների համաձայնության բացակայության դեպքում ժառանգությունը սույն օրենսգրքի 197-րդ հոդվածին, իսկ մտավոր սեփականության դեպքում համահեղինակության սկզբունքին համապատասխան բաժանում է դատարանը»:

8. Լիցենզային պայմանագրերի պետական գրանցումը պետք է դարձնել կամավոր և լրացուցիչ պարտավորություններով չծանրաբեռնել քաղաքացիական իրավունքի սուբյեկտներին:

9. Գյուտի նկատմամբ տրամադրված իրավունքների դադարեցումը կանոնակարգող իրավանորմերի կիրառելիության հետ կապված խնդիրներները բացառելու համար՝ պետք է համապատասխան փոփոխություններ կատարվեն օրենսդրության մեջ: Այսպես՝

Ա. Գյուտի նկատմամբ տրամադրված իրավունքներից հրաժարվելու դեպքի համար պետք է նախատեսել, որ հրաժարումից հետո ընկած ժամանակահատվածի համար վճարված պետական տուրքը վերադարձվում է իրավատիրոջը:

Բ. Օբյեկտիվ տնտեսական կանոնների շրջականներում հարաբերությունները կանոնակարգելու նկատառումից ելնելով՝ «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի երրորդ մասը պետք է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ցանկացած անձ, որը սույն օրենքի 67-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն գյուտի, օգտակար մոդելի կամ արդյունաբերական նմուշի իրավական պահպանության դադարեցման թվականից մինչև պետական լիազոր մարմնի պաշտոնական տեղեկագրում արտոնագրի գործողության կամ արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքների վերականգնման մասին տեղեկությունների հրապարակման թվականը բարեխղճորեն սկսել է սույն օրենքի համաձայն պահպանվող գյուտի, օգտակար մոդելի կամ արդյունաբերական նմուշի օգտագործումը կամ կատարել է օգտագործման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ, պահպանում է դրա հետագա անհատույց օգտագործման իրավունքը (հետօգտագործման իրավունք)»:

Գ. Գյուտի նկատմամբ իրավունքների դադարեցումը պետք է սկսել պետական գրանցամատյանում գրառումը վերացնելուց և ոչ թե արտոնագիրն անվավեր ճանաչելուց:

Դ. ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածում վարչական դատավարության կիրառելի օրենսդրությունը բացահայտելիս պետք է բացառություն նախատեսել մտավոր սեփականության գործերի համար այնպես, ինչպես դա արված է, օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգր-

քում սնանկության վարույթը կարգավորող օրենքների մասով՝ մրցակցության դեպքում առավելությունը տալով կոնկրետ ոլորտ կարգավորող հատուկ իրավանորմերին և ոչ թե ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ընդհանուր իրավանորմերին:

Ե. Գյուտի նկատմամբ տրամադրված իրավունքների դադարման հիմք պետք է համարել հարակադրական լիցենզիայի տրամադրման հիմքերի պահպանումը երկու տարվա ընթացքում և ոչ թե իրավատիրոջ կողմից գյուտն առաջին հարկադրական լիցենզիան տրամադրելուց հետո երկու տարվա ընթացքում բավարար չափով չօգտագործվելը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Գյուտի արտոնագրման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, հունվար 1/162, Երևան, 2013, էջեր 32-38:
2. Գյուտի նկատմամբ իրավունքների պաշտպանությունը և դրանց դադարեցումը // Դատական իշխանություն, փետրվար 2/163, Երևան, 2013, էջեր 40-45:
3. Նորույթը որպես գյուտի արտոնագրաունակության պայման // Արդարադատություն, մարտ 1(20), Երևան 2013, էջեր 43-49:
4. Գյուտի հասկացությունը // Մխիթար Գոշ, Վանաձոր, 2013թ. 1-3 (36), էջեր 109-112:

ИЗОБРЕТЕНИЕ КАК ОБЪЕКТ ГРАЖДАНСКОГО ПРАВА

РЕЗЮМЕ

В настоящей работе автором впервые проведено системное исследование изобретения в рамках объекта гражданского права РА. В связи с этим автор обратил особое внимание на следующие вопросы.

Действующее законодательное регулирование, как на национальном, так и на международном уровнях закрепляя правовую охрану изобретения, не дает определение понятия изобретения, что может вызвать проблемы при разграничении охраняемых и не охраняемых патентным правом изобретений.

Законодатель, отмечая предмет изобретения, четко не указывает принцип дуализма интеллектуальной собственности, из-за чего на практике и при применении специальных норм могут возникнуть проблемы. В этом направлении предлагается при регламентировании правовой охраны изобретения разрабатывать законодательство, исходя из принципа дуализма.

В условиях современных правовых регулирований, раскрывая новизну изобретения, в качестве мишени должно быть принято то, какой стимул создается заявленным изобретением для технологических инноваций и какие особенности имеют признаки изобретения, обеспечивающие решение задачи.

Учитывая то обстоятельство, что в законодательстве непосредственно не устанавливается какой-либо принцип относительно правовой охраны изобретения, предлагается законодательно закрепить обоснованные историческими фактами следующие принципы:

А) правовая охрана изобретения должна быть направлена на защиту прав авторов;

Б) правовая охрана изобретения должна способствовать развитию науки и техники;

В) правовая охрана изобретения должна быть доступной и требующей по возможности меньше расходов;

Г) при правовой охране изобретения должен соблюдаться баланс общественных и частных интересов.

Вопрос патентоспособности изобретения с первого взгляда является институтом, пока еще находящимся в этапе формирования, который не имеет перечня соответствующих конкретных механизмов для достижения своей цели. В связи с этим автор находит, что раскрытие уровня техники должна

осуществляться на основании тех находящихся у уполномоченного органа материалов, которые стали известны государственному уполномоченному органу в процессе его деятельности.

Учитывая необходимость обеспечения успехов в сфере патентного права в РА, автор предлагает обратить внимание на создание новых законодательных идей, а не на приведение национальным законодательством существующих регулирований в полное соответствие с международными критериями. Причем, указанная законодательная политика должна быть направлена исключительно на развитие промышленности Армении, а не на неуместное ограничение прав иностранных субъектов. В связи с этим предлагается:

А) исключить из состава заявки такие документы, которые часто носят формальный характер, например, требование о представлении реферата;

Б) отменить условие обязательной государственной регистрации лицензионных договоров.

В связи с прекращением патентных прав на изобретение законодательством закрепляются отдельные нормы, которые в большинстве, по мнению автора, не следуют из Конституции, а также из сущности объективных экономических отношений. Следовательно, предлагается для прекращения патентных прав предусмотреть такие правовые механизмы, которые обеспечат регламентирование правовой охраны изобретений в условиях справедливости и эффективности. В частности, предлагается:

1. В случае прекращения предоставленных прав на изобретение на основании неуплаты в установленный срок годовой государственной пошлины за поддержание патентов в действии не устанавливать для лица, имеющего право преждепользования, обязанность нерасширения объема использования результата интеллектуальной деятельности.

2. Процесс признания патента недействительным осуществлять посредством не общих норм, предусмотренных процессуальным правом, а имеющихся по делам об интеллектуальной собственности специальных процессуальных норм.

3. Права на изобретение прекратить не на основании неиспользования правообладателем изобретения в достаточной мере в течение двух лет после выдачи первой принудительной лицензии, а в случае сохранения оснований выдачи принудительной лицензии.

FARMANYAN SIMON

INVENTION AS AN OBJECT OF CIVIL LAW

RESUME

For the first time a system study of invention in the framework of objects of the RA Civil Law has been conducted by the author in the following research. In this regard the author has paid a particular attention to the following problems:

The acting legislative regulation does not define the concept of invention while consolidating the legal protection of invention nationally and internationally, and it can cause a problem while distinguishing between the inventions with or without patent protection.

The intellectual property dualism principle is not clearly defined in the Legislation when mentioning the object of the invention, and the latter can result in problems in practice and enforcement of special norms. Thus, it is suggested that the legislation should be developed from the point of view of the above mentioned principle, while regulating the legal protection of invention.

Under the current circumstances of legal regulations the disclosure of the invention should target the incentives created for technological innovations, as well as specific features of the invention that will guarantee the solution of the problem.

As no principle about the legal protection of invention is defined in the legislation it is proposed to consolidate the following principles backed by facts.

- a. The legal protection of invention should be aimed at the protection of the inventors' rights
- b. The legal protection of invention should contribute to the development of science and technology
- c. The legal protection of invention should be affordable and cost effective
- d. The legal protection of invention should guarantee the maintenance of balance between public and private interests

Patentability of the invention from the first sight is still in the phase of formation and has no definite range of mechanisms to achieve its goals. Hence, according to the author of the research, the disclosure of the technology level should be based upon the materials revealed by the authorized body during its operation.

In reference to necessity of providing prosperity in the field of the RA Patent Law the author suggests that new legislative ideas should be developed instead of regulations' complete imitation of the international criteria by the national legislation.

Moreover, the above mentioned legislative policy should be aimed exceptionally at the RA industrial development and by no means at undue restrictions of the rights of foreign entities. In this regard the author has recommended that

- a. Requirement of formal documents such as abstracts be excluded from the application form
- b. Compulsory official registration of license contracts be withdrawn

Individual norms referring to termination of patent rights granted for invention are consolidated in the legislation, the majority of which, according to the author, do not result from the Constitution, as well as from the essence of objective economic relations. Consequently, it is recommended to provide appropriate legal mechanisms designed for termination of patent rights that will fairly and effectively guarantee the regulation of legal protection of inventions.

It is particularly proposed that

- a. No liabilities relating to the expansion of enforcement borders of intellectual activity result be stipulated for an individual having a prior user rights, if the right for the invention is terminated for not paying annual state taxes in due time in order to maintain the patent in action
- b. The process of declaring the patent invalid be conducted by special procedural norms on intellectual property rather than on the basis of the general norms provided by the Procedural Law
- c. Rights for the invention be terminated in the case if the basis of granting compulsory licenses are kept to, and not if the inventor fails to use the invention sufficiently in a two years' period after being granted the first compulsory license